

## ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՄԿՄԱՆ և ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ» «ՌԵՖԵՐԵՆՍ ԼԱԲՈՐԱՏՈՐ ԿԵՆՏՐՈՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԱՏՈՒԿ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՎԱՐԱԿՆԵՐԻ, ԿԵՆԴԱՆԻ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ԹԱՆԳԱՐԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ

Առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղի հատուկ վտանգավոր վարակների և կենդանի կուլտուրաների փորձարարական լաբորատորիայի (այսուհետ՝ ՀՎՎևԿԿՓԼ) հիմնական առաքելություններն են.

- Բոլոր աշխատակիցների, ուսանողների, այցելուների, հասարակության և շրջակա միջավայրի պաշտպանությունը կենսաբանական՝ ներառյալ ներուժային, վտանգների ազդեցությունից, ինչպես նաև լաբորատորիայի՝ կենսաբանական վտանգների հետ կապված ողջ գործունեության և նման աշխատանքներ կատարելու համար կիրառվող միջոցների կիրառման հետ, համապատասխանության ապահովումը գործող ազգային, միջազգային նորմատիվ- իրավական փաստաթղթերին:
- ՀՎՎևԿԿՓԼ-ում կիրառվող բոլոր կենսաբանական ազդակների պաշտպանությունը՝ մարդկանց և կենդանիների վարակման, և/կամ շրջակա միջավայր արտանետման ռիսկերի նվազեցման համար՝ չարտոնված մատչումը, անօրինական կիրառումը և յուրացումը կանխարգելելու նպատակով:

Գիտակցելով սույն առաքելությունները և, հաշվի առնելով, որ կենսաբանական ռիսկերի արդյունավետ կառավարումը կենսականորեն կարևոր է առաքելության և ռազմավարական նպատակների իրականացման համար՝ ՀՎՎևԿԿՓԼ-ի ղեկավարությունը (այսուհետ՝ Ղեկավարություն) ընդունել է կենսաբանական ռիսկերի կառավարման սույն քաղաքականությունը և պարտավորվում է առաջնորդվել վերջինում շարադրված սկզբունքներով:

#### **Քաղաքականության նպատակը**

ՀՎՎևԿԿՓԼ-ում կենսաբանական ռիսկերի կառավարման սույն քաղաքականության նպատակն է լաբորատոր անձնակազմի, շրջակա միջավայրի, կենսաբանական ազդակների պաշտպանությունը, կենսաբանական անվտանգության 2-րդ մակարդակի (ԿԱՄ-2) լաբորատորիայում, կենսաբանական ազդակների հետ աշխատանքի պայմաններում՝ կենսանվտանգության և կենսաապահովության ծրագրի արդյունավետության ապահովման միջոցով:

## Կենսաբանական ռիսկերի կառավարման համակարգ

Նպատակին հասնելու համար Ղեկավարությունը որոշում է կայացրել մշակել և ներդնել կենսաբանական ռիսկերի կառավարման համակարգ՝ որպես ՀՎՎԼԿԿՓԼ-ում՝ «Կենսաբանական ռիսկերի կառավարում լաբորատորիաներում և նմանատիպ հաստատություններում» ISO 35001: 2019 միջազգային ստանդարտում ամրագրված սկզբունքներին համապատասխան, կառավարման միակցված համակարգի մաս:

ՀՎՎԼԿԿՓԼ-ում մշակվող և ներդրվող կենսաբանական ռիսկերի կառավարման համակարգը պետք է լինի.

- **Ինտեգրված.** Կենսաբանական ռիսկերի կառավարումը կազմակերպության գործունեության անբաժանելի մաս է հանդիսանում.
- **Կառուցվածքային և համապարփակ.** Կենսաբանական ռիսկերի կառավարման կառուցվածքային և համալիր մոտեցումը բերում է համաձայնեցվող և համադրելի արդյունքների.
- **Հարմարվողական.** Ռիսկերի կառավարման կառուցվածքը և գործընթացը հարաբերակցվում և հարմարեցվում են՝ հաշվի առնելով կազմակերպության արտաքին և ներքին համատեքստը.
- **Ներառական.** Շահագրգիռ կողմերի համապատասխան և ժամանակին ներգրավումը թույլ է տալիս հաշվի առնել դրանց գիտելիքները, տեսակետներն ու կարծիքները.
- **Շարժընթաց.** Ռիսկերի կառավարումը կանխատեսում, հայտնաբերում, ճանաչում և արձագանքում է ռիսկի փոփոխություններին համապատասխանորեն և ժամանակին.
- **Հիմնված առկա լավագույն տեղեկատվության վրա.** Ռիսկերը կառավարման համար օգտագործվող տեղեկատվությունը պետք է լինի արդիական, հասկանալի և հասանելի շահագրգիռ կողմերին, ցանկացած սահմանափակում և անորոշություն՝ կապված առկա տվյալների և ակնկալիքների հետ, պետք է հաշվի առնվեն.
- **Հաշվի առնող մարդկային և մշակութային գործոնները.** Մարդկային վարքագիծը և մշակույթը էապես ազդում են ռիսկերի կառավարման բոլոր տեսակետների վրա՝ յուրաքանչյուր մակարդակում և փուլում;
- **Շարունակաբար բարելավվող.** Ռիսկերի կառավարումը շարունակականորեն բարելավվում է շնորհիվ ուսուցման և փորձի կուտակման:

## Կիրառման շրջանակը և սահմանները

Կենսաբանական ռիսկերի կառավարման քաղաքականությունը տարածվում է ռիսկերի վրա, որոնք կապված են կենսաբանական ազդակներով աշխատանքի և աշխատակիցների վրա դրանց ներուժային ազդեցության հետ, ինչպես նաև չարտոնված գործողություններից կենսաբանական ազդակների պահպանման և

պաշտպանության հետ կապված ռիսկերի վրա:

Քաղաքականության կիրառման ոլորտը տարածվում է ՀՎՎԼԿԿՓԼ-ի գործունեության վրա, մասնավորապես՝ գիտական, հիմնարար, կիրառական, ռեֆերենս, ախտորոշիչ հետազոտությունների իրականացում, համաձայն Միջազգային դասակարգման ախտածնության 3-4-րդ խմբերի (1-2 խմբերի՝ ըստ ԱՊՀ դասակարգման) ախտածինների հաշվառում և պահում:

Կենսաբանական ռիսկերի կառավարման քաղաքականության և կենսաբանական ռիսկերի կառավարման ծրագրի կիրառման սահմանները՝ Առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի» «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղի շենքը՝ տեղակայված Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Դավիթ Մալյան 37 հասցեում, հատուկ վտանգավոր վարակների և կենդանի կոլտուրաների փորձարարական լաբորատորիայի տարածքում:

#### **Կենսաբանական ռիսկերի կառավարման համակարգի նպատակները**

- Ռիսկերի կառավարման համակարգի ռազմավարական նպատակներն են՝
1. Կենսաբանական ռիսկերի բացահայտմանը, վերլուծությանը, գնահատմանը, ազդեցությանը, մոնիթորինգին և դրանց առնչվող հաշվետվությանը հետևողական և համակարգված մոտեցման ապահովում.
  2. Կենսառիսկերի կառավարման վրա ազդեցություն ունեցող անձանց՝ բարձրագույն ղեկավարություն, միջին օղակի ղեկավարներ, Կենսանվտանգության և կենսաանվտանգության կոմիտե, կենսանվտանգության պատասխանատու, լաբորատորիայի վարիչներ, լաբորատորիայի աշխատակիցներ, ինժեներական անձնակազմ և ՀՎՎԼԿԿՓԼ -ում ներկա գտնվող այլ անձանց համար բոլոր դերերի և պարտականությունների հստակ փաստաթղթավորման և իրազեկման ապահովում.
  3. Ապահովել, որ որևէ ընթացակարգ կամ աշխատանք չի նախաձեռնվի առանց ռիսկերի նախնական գնահատման և վերահսկման միջոցների ներդրման.
  4. Ապահովել, որ ընդունված որոշումներն իրականացվեն ռիսկի հաստատված ընդունելի մակարդակներում և լիովին ապահովեն անձնակազմի, շրջակա միջավայրի և կենսաբանական ազդակների պաշտպանությունը.
  5. Ներքին վերահսկման միջոցների առկայության և աշխատանքների արդյունավետության երաշխիքի ապահովում՝ ներքին աուդիտի միջոցով:

## Կենսաբանական ռիսկի ընդունելի մակարդակ

Ղեկավարությունը, «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի» «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղի կենսաանվտանգության և կենսապահովության հանձնաժողովի օգնությամբ, ընդունելի ռիսկի մակարդակը սահմանում է որպես մնացորդային ռիսկի մակարդակը, որը վերահսկելի է և բացառում է աշխատակիցների շփումը, անախտանշան կրությունը, հիվանդանալը կամ վախճանը, ինչպես նաև բացառում է կենսաբանական ազդակների ցանկացած արտանետում շրջակա միջավայր:

Ղեկավարությունը լիովին գիտակցում է, որ կենսաբանական ռիսկերի կառավարումն իր պատասխանատվությունն է և պատրաստ է տրամադրել բոլոր անհրաժեշտ ռեսուրսներն ու օժանդակ աջակցության մեխանիզմները կենսաբանական ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետ ներդրման և պահպանման համար, որպեսզի կենսաբանական ռիսկերի արդյունավետ կառավարման անհրաժեշտությունը գերակա լինի առողջության և անվտանգության հետ առնչություն չունեցող այլ գործառնական պահանջների նկատմամբ:

Ղեկավարվելով սրանով՝ կձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ կենսառիսկերի կառավարման համակարգը խթանելու և այն շարունակականորեն կատարելագործելու համար:

Կենսաբանական ռիսկերի կառավարման սույն քաղաքականության մասին պետք է իրազեկվեն և ի կատար ածեն ՀՎՎնԿԿՓԼ-ի բոլոր աշխատակիցները և ՀՎՎնԿԿՓԼ-ում ներկա գտնվող այլ անձինք, ինչպես նաև համապատասխան արտաքին կողմերը:

Առողջապահության նախարարության

«Հիվանդությունների վերահսկման

և կանխարգելման ազգային կենտրոնի»

«Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղի

Տնօրեն՝  Սերգեյ Կարապետյան

«\_\_16\_\_» \_\_09\_\_ 2021թ.